ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Արմեն Հայրապետյան

   Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա), 2023 թվականի ապրիլի 16-17-ը

3. **Հրավիրող կողմը.**

   Ռուսաստանի Դաշնության անասնաբուժական և բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայություն (այսուհետ՝ Ռոսսելխոզնադզոր)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

   Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն կաթնամթերքի արտահանման սահմանափակումների վերացման վերաբերյալ հարցը քննարկելու նպատակով

5. **Քննարկված թեմաները.**

   Քննարկվել են կաթնամթերքի մատակարարման նկատմամբ ռուսական կողմի իրականացրած պետական վերահսկողության արդյունքում Հայաստանի Հանրապետությունից Ռուսաստանի Դաշնություն կաթնամթերքի մատակարարումը դադարեցնելու որոշման վերաբերյալ հրատապ հարցը, ինչպես նաև անասնաբուժության ոլորտի փոխգործակցության մի շարք հարցեր:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Այցի ընթացքում Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) ղեկավար Արմեն Հայրապետյանը հանդիպել է Ռոսսելխոզնադզորի ղեկավար Սերգեյ Դանկվերտի և Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչ Դմիտրի Դեմկինի հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Կողմերի միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ հարցը լուծելու փուլային տարբերակով. Հայաստանի Հանրապետության կաթի վերամշակմամբ զբաղվող ընկերությունները, որոնք իրենց գործունեության մեջ օգտագործում են բացառապես տեղական ծագման և Ռուսաստանի Դաշնությունում թույլատրված հումք, պետք է դիմեն Տեսչական մարմին՝ իրենց ընկերություններում ուսումնասիրություններ և վերահսկողություն իրականացնելու համար: Այն ընկերությունները, որոնք կբավարարեն սահմանված պահանջներին, կներկայացվեն Ռոսսելխոզնադզորի դիտարկմանը: Վերջինս կստուգի դրանք և արդյունքների հիման վրա որոշում կկայացնի Ռուսաստանի Դաշնություն կաթնամթերքի ներմուծման վերաբերյալ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ակնկալվում է, որ ձեռք բերված պայմանավորվածությամբ սկսված գործընթացի արդյունքում որոշակի ժամանակահատվածում ամբողջությամբ կվերականգնվեն դեպի ռուսական շուկա հայկական կաթնամթերքի արտահանման նախկին ծավալները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը. 19 ապրիլի 2023թ.